

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.235>

The Artistic Value of Tombstones of Noratus Cemetery

Satenik Baghdasaryan

<https://orcid.org/0009-0005-1783-6693>

Lecturer at YSU Chair of History and Theory of Armenian Art

satenik.baghdasaryan@ysu.am

Keywords: Tombstone art, Noratus, tombstone sculpture, St. Astvatsatsin Church, tombstone of Prince Sahak, cemetery, people of Julfa.

A significant aspect of the historical, cultural, and spiritual heritage of the Armenian people finds its roots in the medieval period, with the art of gravestones holding a special place within this rich material culture. Among these, the monuments of the medieval cemetery of Noratus, adorned with sculptures, stand out as integral and essential components. These tombstones serve as invaluable documentary evidence, offering profound insights into the lifestyle, beliefs, perceptions of the afterlife, and traditions of the people.

The late medieval sculptures found in Noratus are not only fascinating in terms of their craftsmanship and thematic richness but also serve as a chronicle of life itself which encapsulates various aspects of everyday life, including production, craftsmanship, occupations, and daily routines. Noratus Cemetery, second in size only to the historical cemetery of Jugha, holds immense significance in both Armenian history and culture. Through extensive fieldwork, a rich comparative material has been amassed, highlighting Noratus's distinction within the Gegharkunik region for its abundant tombstone and khachkar art. This distinction is evident in the diverse themes depicted, the abundance of sculptures, and the chronological range represented. The tombstones of Noratus are not just silent markers of the deceased but vibrant testimonies to the past, preserving the essence of medieval Armenian life and culture for future generations to discover and evaluate.

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը¹

¹ Հետազոտությունը իրականացվել է հետևյալ դրամաշնորհի շրջանակներում՝ Scholar grant of NAASR (The National Association for Armenian Studies and Research) and the Knights of Vartan Fund for Armenian Studies, with support from Dean Shahinian.

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 235-254



Received: 20.06.2024

Revised: 18.07.2024

Accepted: 31.08.2024

Մաթենիկ Բաղդասարյան

ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն դասախոս

Հիմնաբառեր՝ տապանաքարային արվեստ, Նորատուս,

տապանաքարային քանդակ,

Սր. Աստվածածին եկեղեցի, Սահակ իշխանի տապանաքար,

գերեզմանատուն, ջուղայեցիներ:

Հայ ժողովրդի պատմական, մշակութային և հոգևոր ժառանգության զգալի մասը աղերսվում է միջնադարյան շրջանին, և այդ նյութական հարուստ մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նաև գերեզմանական կոթողների արվեստը, որի անբաժանելի և բաղկացուցիչ մասն են կազմում Նորատուսի միջնադարյան գերեզմանատան կոթողներն իրենց քանդակներով: Նորատուսի տապանաքարերը, որպես փաստավավերագրական նյութ, հարուստ տեղեկություններ են հաղորդում ժողովրդի կենցաղի, հավատալիքների, անդրշիրիմյան աշխարհի մասին պատկերացումների, ավանդույթների մասին: Կատարողական և թեմատիկ առումով հետաքրքիր, կենցաղի տարեգրության բնույթ ունեցող ուշմիջնադարյան այս քանդակներում խտացված են արտադրական կենցաղի, արհեստների, զբաղմունքի, աշխատանքային առօրեայի առանձին դրվագները: Նորատուսի գերեզմանատունը իր մեծությամբ երկրորդն է Ջուղայի պատմական գերեզմանատնից հետո: Դաշտային աշխատանքներից ձեռք բերված հարուստ համեմատական նյութը փաստում է, որ Գեղարքունիքի մարզում Նորատուսը առանձնանում է իր տապանաքարային և խաչքարային հարուստ արվեստով, բազմաժանր թեմաներով, պատկերաքանդակների առատությամբ, ժամանակագրական ընդգրկմամբ:

Художественная ценность надгробий кладбища Норатус

Сатеник Багдасарян

Преподаватель кафедры истории и теории армянского искусства ЕГУ

Ключевые слова: надгробное искусство, Норатус,

надгробная скульптура, церковь Св. Аствацацин,

надгробие князя Саака, кладбище, Джульфа.

Значительная часть исторического, культурного и духовного наследия армянского народа уходит своими корнями в средневековье, а искусство надгробий занимает особое место в этой богатой материальной культуре. Среди них выделяются памятники средневекового кладбища Норатус, украшенные скульптурами, которые являются неотъемлемыми и важными компонентами. Эти надгробия служат бесценным документальным материалом, предлагая глубокие истины об образе жизни, верованиях, представлениях о загробной жизни и традициях народа.

Позднесредневековые скульптуры, найденные в Норатусе, не только знаменательны своим мастерством и тематическим богатством, но и служат хроникой самой жизни. Они воплощают различные аспекты повседневной жизни, включая производство, ремесла, занятия и повседневные рутины. Кладбище Норатус, занимающее второе место по размерам после исторического кладбища Джульфа, имеет важное значение. Посредством проделанной полевой работы был накоплен богатый материал в плане сравнительного анализа, подчеркивающий выдающееся место Норатуса в гегаркуникском регионе относительно исследования богатого материала по надгробиям и хачкарам. Это отличие проявляется в разнообразных темах, изображенных на них, обилии скульптур и хронологическом диапазоне.

Надгробия Норатуса — это не просто молчаливые памятники умершим, но и яркие свидетельства прошлого, сохраняющие суть средневековой армянской жизни и культуры, которые могут быть оценены будущими поколениями.

* * *

Ներածություն: Հայ ժողովրդի պատմական, մշակութային և հոգևոր ժառանգության զգալի մասը աղերսվում է միջնադարյան շրջանին, և այդ նյութական հարուստ մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նաև գերեզմանական կոթողների արվեստը, որը մինչև օրս չի արժանացել համապարփակ ուսումնասիրության: Միջնադարյան հայ արվեստի անբաժանելի և բաղկացուցիչ մասն են կազմում Նորատուսի միջնադարյան գերեզմանատան կոթողներն իրենց քանդակներով: Նորատուսը ամենից առաջ հայտնի իր խաչքարադաշտով, ուր ներառում է շուրջ 900 խաչքարեր, որոնք թվագրվում են IX-XVII դարերով: Ուշադրության են արժանի գերեզմանական կոթողներ հանդիսացող խաչքարերից բացի նաև տապանաքարերը, որոնք կարող են ուսումնասիրության:

Թեմայի ուսումնասիրությունը արդիական է և հիմնավոր, քանի որ տապանաքարերը վերածված լինելով փաստավավերագրական նյութի՝ հարուստ տեղեկություններ են հաղորդում ժողովրդի կենցաղի, հավատալիքների, անդրշիրիմյան աշխարհի մասին պատկերացումների, ավանդույթների մասին: Կատարողական և թեմատիկ առումով հետաքրքիր, կենցաղի տարեգրության բնույթ ունեցող ուշմիջնադարյան այս քանդակներում խտացված են արտադրական կենցաղի, արհեստների, զբաղմունքի, աշխատանքային առօրեայի առանձին դրվագները: Մրանք հարուստ նյութեր են ոչ միայն արվեստաբանների համար, այլ նաև ազգագրագետների, մշակութաբանների և հնագետների:

Գեղարքունիքի մարզի տապանաքարային արվեստի հետազոտությունը, դրանց փաստագրումը (թեկուզ լուսանկարների տեսքով) խիստ անհրաժեշտ է պայմանավորված նաև աղբրեջանական ագրեսիայով: Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մի շարք գյուղեր պարբերաբար հայտնվում են աղբրեջանական ագրեսիայի թիրախում, իսկ աղբրեջանական պետական քաղաքականության մի մասն է կազմում քրիստոնեական ծագում ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և խաչքարերով գերեզմանոցներ) զանգվածային ջարդարարությունը:

Միջնադարյան տապանաքարերի պատկերաքանդակների պատկերագրական և իմաստաբանական քննության փորձ կատարել են Ս. Բարխուդարյանը, Գ. Կարախանյանը, Գ. Լևոնյանը, Ս. Սաղումյանը, Ա. Մարտիրոսյանը, Գ. Սարգսյանը, Հ.Պետրոսյանը: Նրանցից

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

յուրաքանչյուրը հանդես է եկել առանձին հողվածներով, ներկայացրել տապանաքարային արվեստի զարգացումը, առանձնահատկությունները: Բարխուդարյանն ու Կարախանյանը «Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները» հողվածում ներկայացնում են XIV-XVII դարերի հայկական գերեզմանաքարերի առանձնահատկությունները և բացահայտում նրանց պատմա-մշակութային արժեքը [Բարխուդարյան, Կարախանյան, 1959, 95-210]: Գ. Կարախանյանը առանձին հողվածով անդրադարձել է միջնադարյան շրջանի կենցաղային քանդակների ուսումնասիրությանը, մի շարք տապանաքարային պատկերաքանդակների միջոցով ցույց տալիս նրանց աշխարհիկ, կենցաղային բնույթը, և դրանց կարևորությունը քանդակագործության զարգացման ընթացքն ու օրինաչափությունները հասկանալու համար [Կարախանյան, 1975, 31-47]: Ս. Սաղումյանը տապանաքարային արվեստի մասին նկատառումներ է կատարում, նշում այս արվեստի առաջացման թելադրող հանգամանքները՝ տնտեսական գործունեությունը, ստեղծված սոցիալ-քաղաքական կացությունը, կենցաղավարությունը, զբաղմունքը, հավատալիքները և այլն [Սաղումյան, 1988, 50-61]: Ա. Մարտիրոսյանը առանձին հողվածով ներկայացնում է Նորավանքում գտնվող Էլիկումի տապանաքարի քննությունը [Մարտիրոսյան, 1988, 154-159]: Գ. Սարգսյանը «Խոսում են տապանաքարերը» հողվածում շուրջ տասնյակ տապանաքարերի վերլուծություն է կատարում, նկարագրում դրանք և փորձում գտնել իմաստաբանական կողմը [Սարգսյան, 1963, 29-40]: Մեր օրերում տապանաքարային արվեստի ամենից հանգամանալի ուսումնասիրություններ կատարում է Հ. Պետրոսյանը: Առանձին հողվածներով ներկայացնելով ուշ միջնադարյան (15-18-րդ դարեր) տապանաքարային պատկերաքանդակի պատճառաբանական, պատկերագրական և իմաստաբանական կողմերը, ինչպես նաև քննել «մանուկի» և «ուսումնասերի» կերպարը ուշ միջնադարյան պատկերաքանդակում, նաև Վայոց Ձորի և Բոնակոթի տապանաքարերի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ կատարել [Պետրոսյան, 2014, 301-308]:

Այս ուսումնասիրությունների շարքում առանձին անդրադարձ չի կատարվել Նորատուսի միջնադարյան գերեզմանատանը գտնվող մոտ հարյուրի հասնող տապանաքարերի ամբողջական վերլուծությանը և նկարագրությանը:

Հետազոտական աշխատանքի կատարման համար ընտրված մեթոդների ընտրությունը պայմանավորված է եղած ինդիքների բազմազանությամբ: Նորատուսի XV-XVIII դարերի տապանաքարային արվեստի ուսումնասիրման համար օգտագործվել է արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդը, որը ներառում է նկարագրական, պատմական, համամետական, պատկերագրական, ոճական և աղբյուրագիտական վերլուծությունները:

Նորատուսի միջնադարյան տապանաքարերի կերտման ժամանակը և միջավայրը:

Նորատուսը հանդիսանում է Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը, որը հայտնի է իր բրոնզի և երկաթի դարերով թվագրվող բազմաթիվ հուշարձաններով: Ըստ ավանդության՝ Գեղամ նահապետը նվաճել է տարածաշրջանը և Հերի բնակատեղիից ոչ հեռու՝ Գավառագետի ափին, գեղատեսիլ վայրում կառուցել է բնակավայր և կոչել Նորատուս: Սարգիս Ջալալյանը «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության մեջ այսպես է նկարագրում Նորատուսը. «Լայնատարած գյուղ է Գեղամա ծովակի հյուսիս-արևելքում, օդն առողջարար է, ջուրն՝ անուշահամ: Շրջապատված է ընդարձակ դաշտերով, ծաղկավետ ու պարարտ

արոտավայրերով, առջևով անցնում է համեղ ձկներով լի Գյոզչա գետակը: Բնակիչները հայեր են՝ հարյուր ութսուն տուն. . . » [Զալայանց, 2016, 326]:

Հին թե ուշ շրջանի մատենագրական և վիմագիր սկզբնաղբյուրներում գյուղը հիշվում է շուրջ երկու տասնյակ նույն բառարմատի թեքումներով ու բարբառադարձվածներով: Պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին իր «Պատմություն Հայոց» երկասիրության մի շարք դրվագներում բնակավայրը կոչում է Նորատունք կամ Նորատունս [Դրասխանակերտցի, 1996, 302]: Գրեթե չորս դար անց Սյունիքի պատմությունը մանրակրկիտ շարադրող Ստեփանոս Օրբեյանը Նորատունս տեղանունը նշում է Նորատուք ձևով: Միմեոն Երևանցի կաթողիկոսը «Ջամբո»-ում մի շարք տեղանունների կողքին, ինչպիսիք են Բոնի, Ղշլախ, Բուզխանա և այլն, նշում է նաև Նորատունս անունը և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին անվանում Դափուց, որը եղել է կուսանաց վանք [Երևանցի Միմոն, 1873, 284]: Ալիշանը ևս հիշատակում է Նորատունս, Նորատուաց ձևերը և նշում, որ գյուղը այդ ժամանակ Նորատուգ է կոչվել [Ալիշան, 1893, 45]:

Մեսրոպ Սմբատյանը օգտագործում է տեղանվան Նորադուգ տարբերակը, գրանցել է մի շարք արձանագրություններ և նկարագրել գյուղը [Սմբատյանց Մ., 1895, 480-488]: Նորադուգ տարբերակն է օգտագործել նաև անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը իր «Գեղարքունիք կամ Նոր Բայազետի գավառը» գրքում: Ոստիկանական շրջանում առանձնացնում է տարբեր գյուղական հասարակություններ, որոնցից էր Աղզիբիբի գյուղական հասարակությունը, որի կազմի մեջ էլ մտնում էր մեր քննությանը առնչվող Նորատունսը: Գտնվում է Նոր Բայազետ քաղաքից հյուսիս-արևելք, մոտ 3 կմ հեռու, մի գեղածիծաղ դաշտավայրի վրա, որը հնում Նորադուգ կամ Նորատուաց գյուղ է կոչվել: Լալայանը նշում է նաև, որ բնակիչները այստեղ գաղթել են Ալաշկերտից և Արծափից [Լալայան, Ա.Թ., 12]:

Նորադուգ տարբերակը ստուգաբանվում է իբրև դուգ, հարթ, հարթավայր: Լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը տեղանունը մեկնաբանում է որպես նորընձա, նոր տրված և համարում, որ Նորատուց, Նորատուք տարբերակների ելակետային ձևը «Նորատունս»-ն է, իսկ ս-ն արմատի կազմի մեջ չի մտնում, այլ՝ հոգնակի հայցականի «ս»-ն է [Մարտիրոսյան, 2014, 241]: Հովհաննես Կարապետյանը կապում է նաև արմատի հետ, որը կրակ է նշանակում, որն էլ հետո ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է նոր [Կարապետյան, 1998, 12]:

IV դարից մինչև IX դարը Նորատունսը ընդգրկված է եղել Սյունյաց իշխանության կազմի մեջ և անցել է համեմատաբար ավելի խաղաղ կյանքով: 910-ական թվականների վերջերին Նորատունսը Գեղարքունիքի կազմում մտնում է Բագրատունիների թագավորության մեջ: 996թ. խաչքարի արձանագրության մեջ նշվում է, որ Խարիպ Նորատուցցին Գագիկ թագավորին է ենթարկվում, իսկ 1000թ. մոտերքում արքունական գործակալ Հերակղ (Հերակլ) Հովնունին նույն Գագիկ շահնշահի հրամանով մշակովի հողեր է նվիրում Մբ Գրիգոր (Դափուց) վանքին [Բարխուդարյան, 1973, 18]: Սա վկայում է գյուղի իրավաստիքական նոր վիճակը: Այն որպես պետական կալվածք հետագայում շարունակում է մնալ:

Նորատունսի բարգավաճումը շարունակվում է նաև Զաքարյանների կառավարման շրջանում: Երկիրը սելջուկ թուրքերից ազատագրելուց հետո ծովափնյա հողերն անցնում են Իվանե Զաքարյանի իրավասությանը: Նորատունսը վերստանում է Ծմակ գավառի վարչական և հոգևոր կենտրոնի ֆունկցիան, որը շարունակվում է 900 տարի շարունակ, IX–XVIII դդ. ընթացքում որոշակի ընդհատումներով:

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

Կյանքը եռում է Նորատուսում XIII և հետագա չորս-հինգ դարերում: Հոգևոր և աշխարհիկ առաջնորդները վայելուչ խաչքարեր են կանգնեցնում հարազատների հիշատակին՝ եկող սերունդներին թողնելով կարևոր պատմական փաստարկներ: XIV դ. 30-ական թթ. սկզբում Նորատուսը վերստին անցել է Սյունյաց նախարարական տան ենթակայության տակ: Այս վկայող ևս մի արձանագրություն ունենք Դափուց վանքում: Մբ Գրիգոր կամ Դափուց վանքը գյուղի հարավային եզրին է գտնվում: Ընդունված է եկեղեցին թվագրել XIII դարով, սակայն արձանագրությունները և շինարվեստը վկայում են, որ շենքը կառուցվել է X դ.-ից առաջ: (Նկ. 1)

Մբ Աստվածածին և Դափուց եկեղեցիներից բացի, գյուղամիջում ցրված մի շարք հուշարձաններ կան: Գյուղամիջում ցրված խաչքարերից հնագույնը թվագրվում է 1211թ. և նվիրված է եղել կամրջի կառուցմանը:

IX դարի կեսերից, երբ Բագրատունիների կողմից Հայաստանի պետականությունը վերականգնվում է, Նորատուսի դերն ու համբավը զգալիորեն բարձրանում է: Սյունյաց նախարարական տոհմից Սահակը իր հոր՝ Վասակի մահից հետո, բաժին է ստանում ամբողջ Գեղամա գավառը: Սահակին հաջորդում է իր որդին՝ Վասակ Գաբուռնը, ով ամուսնանում է Աշոտ Բագրատունու դուստր Մարիամ Իշխանուհու հետ: Մարիամին է վերագրվում Գեղարքունիքում 40 եկեղեցիների, այդ թվում՝ Սևանի վանքի, Շողագա վանքի և Վանեվանքի կառուցման պատիվը: Նորատուսը տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային վերելք է ապրում Վասակի և Մարիամի որդի Սահակ իշխանի օրոք: Նա Նորատուսը դարձնում է իր պաշտոնական նստավայրը:

Մուրբ Աստվածաին եկեղեցին և նրա շրջակայքի տապանաքարերը: IX դ. վերջում Սահակը կառուցում է Մբ Աստվածածին եկեղեցին և այն դարձնում եպիսկոպոսանիստ: Եկեղեցու գմբեթավոր սրահը ամբողջովին կառուցված է եղել սրբատաշ մեծ քարերով: Իսկ շրջակայքը առանձնացվել է պարսպապատ բակով: Բակում մի շարք խաչքարեր և տապանաքարեր են ընկած: (Նկ. 2) Մեր հաշվարկներով այս տարածքում կան շուրջ 57 պատկերազարդ տապանաքարեր, չհաշված հարթ տապանաքարերը: Մ. Բարխուդարյանը գրառել է այս մասից ընդամենը հինգ տապանաքարի արձանագրություն: (Նկ. 3)

Շուրջ ութ դար Նորատուսը հանդիսացել է Գեղարքունյաց գավառի վարչական, առևտրական, տնտեսական, մշակութային և հոգևոր կենտրոն: Սահակ իշխանը, ամենայն հավանականությամբ, մահացել է 910-ական թվականների կեսերին և Ստ. Օրբելյանի հաղորդած տվյալներով թաղվել է հենց Նորատուսում: Սահակը մեկնում է Գեղարքունի իր հայրենի կալվածքը և կարճ ժամանակ ապրելով՝ վախճանվում է և թաղվում իր կառուցած մեծ եկեղեցու դռանը [Օրբելյան, 1986, 188]: Եկեղեցու արևմտյան պատի մոտ, մուտքից ձախ, այժմ էլ կարող ենք տեսնել սեղանաձև մի մեծ տապանաքար, որն ունի դարին բնորոշ պարզ հորինվածք ու զարդանախշեր:

Հովհաննես Շահխաթունյանցը պատմում է մի ավանդություն, որ երբ լեզգիները գրավում են Գեղարքունիքը, ամբողջ բնակչությանը հավաքում են Մբ Աստվածածին եկեղեցու ներսում և տանիքում, իսկ թշնամին այրում է եկեղեցին բնակիչներով հանդերձ [Շահխաթունյան, 2014, 366]: Արդյո՞ք Սահակ իշխանի տապանաքարը չէր տուժել այս հարձակումից, չենք կարող հստակ իմանալ: Մինչ Մբ Աստվածածնի եկեղեցու շինարարության ընթացքը (2017-2019 թթ.)

տապանաքարի տեղադրությունից երևում էր, որ այն տեղաշարժված է և իր նախնական դիրքում չէր գտնվում: Շինարարության ավարտից հետո, այս տապանաքարը ամրացվել է սալահատակված գետնին: (Նկ. 4)

Սուրեն Սաղումյանը նշում է, որ Սևանա կղզու հյուսիսային լանջի ստորոտի ծառերի տակ մի խաչքար կա՝ հասակով մեկ կանգնած, ձախ ձեռքը վեր պարզած բարձրաքանդակով և Մ. Բնորոշ տառաձևերով արձանագրված՝ ՍԱ/ՀԱԿ/ՇԱ/Ռ/ԱՅ/ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ¹: Թեև արձանագրությունը ավելի շատ բնորոշ է հոգևորականի, սակայն քանդակի մանրամասները՝ թասակ, տաբատ, աշխարհիկ-իշխանականի են: Սաղումյանը կարծում է, որ շատ հավանական է, որ խաչքարը կղզի է բերվել Նորատուսից և այն վերաբերում է Սահակ իշխանին [Մանուկյան, 2000, 35]: Խնդիրը կայանում է նրանում, որ մեզ հայտնի չէ X դարով թվագրվող որևէ խաչքար, որը կունենար նաև պատկերաքանդակ, այս առումով շատ հետաքրքրական կլինեք գտնել խաչքարը մեր օրերում և քննության առնել: Մեզանում շատ կարևոր է գտնել հայոց արքաների, իշխանների, ազնվականների տապանաքարերը, որոնք պատմության խոսուն վկաներից են:

Շողոմու մատուռը: Մատուռը գյուղից 2 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող բարձունքի վրա է: Այն շինված է եղել սրբատաշ քարերով, պահպանվել են միայն պատերի ստորին շարքերը: Արևմտյան պատը շարված է խաչքարերով, իսկ բակի շուրջը կան խցերի ավերակներ: (Նկ. 5) Մեր վերջին շրջայցի ժամանակ փորձեցինք հաշվառել խաչքարերի (շուրջ 70-ից ավել) և տապանաքարերի քանակը, որն այնքան էլ մեծ թիվ չի կազմում մատուռի տարածքում: Այս մասում ունենք ընդամենը 10 օրորոցաձև տապանաքար, որոնցից երկուսը առանց պատկերաքանդակի: Մատուռի արևմտյան մուտքի մոտ, կեսից ավելին հողի մեջ խրված մի հետաքրքիր տապանաքար կա, որը թվագրվում է 1606թ.-ով, չափերն են՝ 100x58 սմ: Մինչև հողածածկույթից ազատելը երևում էր միայն մի ֆիգուրի գլխի հատվածը, մեկ այլ ֆիգուրի մինչև գոտկատեղը: Հողից, խոտածածկույթից մաքրելուց հետո նոր միայն պատկերաքանդակը ամբողջովին պարզ և տեսանելի դարձավ: Բացվեցին մի շարք առարկաներ ու մանրամասներ, որոնք մինչև այդ չէին երևում: Այն ֆիգուրը, որի միայն գլխի հատվածն էր տեսանելի, ունի մինչև ուսերն հասնող հյուսքեր, արտահայտիչ դիմագծեր, ընդգծված բեղերով, մի ձեռքով բռնել է հավերժության նշանով պնակը, իսկ մյուս ձեռքին սափոր է, այս ֆիգուրից աջ թանաքաման-գրչատուփն է, դրանից վերև գրքի նմանվող իր: Այնուհետև մյուս ֆիգուրն է ներկայանում, մի ձեռքով բռնել է պնակիտը, իսկ մյուս ձեռքով կարծես գլխարկն է հանում, վարպետը հետաքրքիր դիրքով է ներկայացրել այս կերպարին, ոտքերը կարծես խաչված լինեն, իսկ կերպարին տեղավորել է աստիճանաձև հարթակի վրա: Ներկայացնենք հաջորդ ֆիգուրին, որը հանգուցյալն է՝ թամբած ձիու վրա հեծնած, երկճղա թագով, մի ձեռքով բռնել է ձիու սանձից, իսկ մյուս ձեռքում կլոր մի իր է, որից դուրս է գալիս դեպի հորիզոնական տարածվող բողբոջներով մի ճյուղ, որը ավելի շատ զարդի է վերածվում: Հանգուցյալի դեմքի հատվածը ամբողջությամբ մամռակալած էր, մամուռը մաքրելուց

¹ Այս տեղեկության հավաստիությունը ճշտելու համար, մենք փորձեցինք գտնել Սաղումյանի նշած խաչքարը՝ իր իսկ տված կոորդինատներով, սակայն ոչ մի խաչքար չգտանք: Կարծում ենք, որ այդ խաչքարը, ինչպես այլ խաչքարեր, հետագայում տեղափոխվել են Էջմիածին, թեև ավելի հստակ իմանալու համար հարցրինք նաև տեղի հոգևորականներից, բայց ոչ մեկ տվյալ խաչքարի մասին տեղեկություններ չունենք:

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

հետո շատ արտահայտիչ երևում էին բեղ-մորուսը, ինչպես նաև ականջներից կախված քառակուսի օղերը: (Նկ. 6)

Հետաքրքիր է մեզանում տղամարդկանց ականջներին օղերը տեսնելը: Վարդան Հացունին «Հայ հին տարազը» աշխատությունում թաթարական շրջանը նկարագրելիս նշում է, որ օղերի հիշատակություն հանդիպում ենք նաև ռամիկների վրա: Քերովբե ռոբասացը «կտրիճ մեռելոյն» ասում է. «Զօղերս (կամ զգինդս) յականջես առին»: Եվ մեկ ուրիշ Պողոս՝ դարձեալ «կտրիճ մեռելոց» կողմից նույն տրտունջն է կրկնում՝ «Եվ յականջես առին զօղերս յոյժ սիրական»: Ասիայի և Հնդկաստանի մի քանի գավառների մեջ այս զարդը սովորական էր նաև արական սեռի համար, ինչպես տեսնում ենք արաբների ու քրդերի մոտ: Հացունին մեզ մոտ ականջօղեր կրելու սովորույթը կապում է արտաքին ազդեցության հետ, քան սասանյան շրջանի սովորության շարունակության: Թանկագին էին այդ օղերը, որով թաղման պահին հանում էին» [Հացունի, 1923, 224]: Ականջօղերով տղամարդկանց պատկերներ տապանաքարային քանդակում հանդիպում ենք ևս մի քանի օրինակներում: (Նկ. 7)

Ամբողջ պատկերաքանդակը առնված է եռաթել հյուսվածքի մեջ, որը եզերում է երեք կողմը: Արձանագրությունը կազմում է գոգավոր վերնամասը, երկու շարքով, իսկ թվականը վարպետը տեղադրել է կողային հատվածում, գծային խաչ է, իսկ խաչի ներքևի մասում Թ և Վ տառերը, այնուհետև ՌԾԵ տառերը (1606թ.): Մեզ հաջողվեց կարդալ արձանագրության մի հատվածը միայն՝ ՍՈՒՐԲ ԽԱԶՍ ԲԱՐԷԽՈՍ ՓԱՆՈՍԻՆ...: Տապանաքարի հարավային երեսը կազմում է չորս պարանահյուս կամարների մեջ առնված խաչային հորինվածքները, որոնց մեծ մասը մնացել է հողի տակ: Կամարներից վերև, բավականին մեծ տարածք վարպետը հատկացրել է կողային ու վերին հատվածները զարդագոտու մեջ առնելու համար: Նման զարդերը վարպետները հիմնականում օգտագործում էին խաչքարերի քիվային և կողային մասերը լրացնելու համար:

Մեկ այլ շատ հետաքրքիր տապանաքար գտնվում էր մատուռի արևելյան կողմում: Սկզբնական դիրքից տեղահանված և գլխիվայր հողի մեջ խրված մի տապանաքար է: Տապանաքարը շատ հետաքրքիր պատկերաքանդակ ուներ, այն պատկերում էր մի տղամարդ դերձակի, ով իր ձեռքին մկրատ ուներ բռնած, ոտքերը ծալապատիկ դիրքով, արտահայտիչ մորուքով, ուղղահայաց գծերով ծալքերի նմանվող գլխարկով: Դերձակից աջ դանակի նմանվող իր է, իսկ մյուս կողմում մի առարկա է կլոր ծայրով, որից դուրս են գալիս երեք ձողեր, միգուցե դերձակի ասեղներն են: Եվս մի կերպար ունենք, որն ձեռքին բռնել է պնակիտ, իսկ կողքին էլ գրքի պատկեր է: Պատկերաքանդակը, ամենայն հավանականությամբ, ունի շարունակություն, որը մնացել է հողի տակ: Մյուս երեսին յոթ կամարների մեջ խաչային հորինվածքներ էին, և դրանից վեր անարվեստ գրչությամբ արձանագրությունը, որը սկսվում էր Սուրբ խաչս բարեխոս կանոնիկ սկզբով: Հողից մաքրելուց հետո արձանագրությունը բացվեց, Բարխուդարյանը արձանագրությունը գրառել է¹, նշանակում է նա տապանաքարը տեսել է իր նախնական դիրքով:

¹ ՍԲ. ԽԱԶ[Ս] ԲԱՐԷԽՈՍ ... Ի ՓՐԿՈՒԹԻ. ԹՎ. : յկր: (1613) կազմող էլ[ի]աս... Ս. Բարխուդարյանի «ԴՎՀ», Պր. 4, № 184:

Ըստ արձանագրության՝ տապանաքարը թվագրվում է XVII դարով (1613թ.), հանգուցյալի անունը չի պահպանվել, իսկ վարպետը ոմն էլիասն է: (Նկ. 8)

Միջնադարյան մեծ գերեզմանոց: Նորատուսը ամենից շատ հայտնի է իր մեծ գերեզմանոցով: Գտնվում է գյուղի հարավային եզրին՝ ընդարձակ բարձրավանդակի վրա: Կազմված է հին և նոր մասերից: Հին մասը սկսվում է բարձրավանդակի արևմտյան կողմից, ուր թաղումները սկզբում դասավորված են կանոնավոր շարքերով՝ հյուսից հարավ: Այս մասում են գտնվում նաև երկու մատուռներ, որոնցից մեկը կառուցվել է 1211թ., իսկ մյուսը՝ 1714թ.: (Նկ. 9) Գերեզմանատան նոր մասը շարունակվում է դեպի արևելք, որտեղ այժմ էլ թաղումներ են կատարվում: Այս մասում կան հին խաչքարեր և բեկորներ, որոնք բերվել են հին մասից և օգտագործվել որպես տապանաքարեր: Նորատուսի գերեզմանատունը իր մեծությամբ երկրորդն է Ջուղայի պատմական գերեզմանատնից հետո:

Տապանաքարերի ծավալային կառուցվածքները, հարդարման հիմնական մոտիվները և պատկերաքանդակների տիպերը: Բարխուդարյանը նշում է, որ IX-X դարերում Հայաստանի գրեթե բոլոր գավառներում տարածված էր օրորոցաձև անգարդ տապանաքարերը, իսկ XII դարից հանդիպում ենք հարթ, օրորոցաձև և խոյաձև տապանաքարերի [Բարխուդարյան, 1959, 198]: Օրորոցաձև տապանաքարերը լայն տարածում են գտնում XII-XII դարերում և հավանաբար երկլանջ տապանների գազաթային՝ սրածայր հատվածի կորավուն մշակման արդյունք է [Միրիջանյան, Աղայան, 2020, 92]: Միանշանակ տալ սահմանազատում հարթ և օրորոցաձև տապանաքարերի ստեղծման և տարածման վերաբերյալ կարծում ենք, որ հնարավոր չէ: Նորատուսի գերեզմանատունը հանդիսանալով Հայաստանի տարածքում ամենամեծը՝ թույլ է տալիս թերևս ամենաճիշտ պատկերացումը կազմել տապանաքարային արվեստի զարգացման և կատարելագործման մասին: Այստեղ կողք կողքի տարածված են հարթ և օրորոցաձև տապանաքարեր, անգամ մի տապանաքակում, ուր ամենայն հավանականությամբ մի գերադաստան է թաղված, կարող ենք հանդիպել այս երկու տեսակն էլ: Հարթ տապանները կամ ամբողջությամբ արձանագիր են լինում՝ առանց պատկերների, կամ միայն սխեմատիկ, գծային պատկերներով, թեև որոշները առաձևահատուկ են իրենց մանրամասների ներկայացմամբ: Նշենք, որ ընդունված կանոններ ու օրինաչափություններ կային, որոնց հետևում էին վարպետները տապանաքարերի նկարագրում համար, բայց ընդհանուր օրինաչափություններից շեղումներ, իհարկե, միշտ նկատում ենք: Հարթ տապանաքարերի դեպքում հիմնականում բացակայում է դրանց վրա կենցաղային կամ ինչ-որ թեմատիկ տեսարան: Դրանք հարդարվում են հանգուցյալի պատկերով և իրենց վրա կրում արձանագրություն, կամ միայն արձանագրությունն է իշխում ամբողջ տապանաքարի մակերեսով: Հարթ տապանաքարերի վրա, եթե պատկերված էր լինում ցուպ, ապա այն անշուշտ որևէ հոգևորականի էր պատկանում: (Նկ. 10)

Օրորոցաձև տապանաքարերի հյուսիսային նիստը սովորաբար ծածկվում էր 3-5 կամարակապ զարդաքանդակ խորաններով՝ յուրաքանչյուրի մեջ մեկական քանդակազարդ խաչ, իսկ հարավայինը՝ թեմատիկ պատկերաքանդակներով: (Նկ. 11, 12)

Ճակատային հարթություններին պատկերվում էր մագիլներում գառ բռնած թևատարած արծիվ, հավերժության նշան, խաչ (նաև խաչ երկու կողմերում թռչուններ), սափոր կամ լրացվում էր ինչ-որ կենդանու պատկերով: (Նկ. 13) Որպես շրջանակ կարող էր հանդիսանալ երկթել

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

հյուսվածքը, երկշար սեպածն զարդը կամ պարանահյուս ժապավենագոտին: Վարպետները զարդամոտիվները օգտագործում էին տեղին և զուսպ: Տապանաքարերը կերտվում էին մեծ մասամբ բազալտի կամ տուֆի ամբողջական զանգվածից և ստորին ելուստը ագուցվում երկաստիճան բարձիկին:

Օրորոցաձև տապանաքարերի քանդակազարդումը մարդկային և կենդանական պատկերներով սկսվում է XV դարից սկսած: Պատկերաքանդակներում գլխավոր «հերոսը» հանգուցյալն է, որը պատկերվում էր որոշակիորեն իդեալականացված կերպարով և իդեալականացված միջավայրում: Շատ հաճախ ննջեցյալը գլխին արքայական եռաշուշան թագով է պատկերվում կամ պարզապես որպես երկրագործ՝ գութանով հանդերձ, հովիվ՝ մահակով և սրինգով, արհեստավոր՝ համապատասխան գործիքներով կամ ուսումնասեր անձ՝ գրչության պարագաներով: Ամբողջ տեսարանում հանգուցյալին կարելի է առանձնացնել կրծքին խաչված ձեռքերի դիրքով, կամ ձեռքին բռնած խաչով, ոտքերի դիրքը ամեն անգամ կարող է փոխված լինել՝ ուղղված կամ հյուսիս, կամ հարավ: Առանձին ուշադրության են արժանի հեծյալ ռազմիկների կերպարները, որոնք ամենից հաճախ պատկերվում են որսի պահին սպառազինված կամ ոտքերի տակ գալարվող վիշապին նիզակով խոցելիս: Անկախ թեմայի բովանդակությունից հորինվածքների անբաժան տարրերն են հանդիսանում սափորը և գավաթը, ապա ուտելիքներով լի սեղանը: Շատ դեպքերում սափորներն ու գավաթները իրենց վրա կրում են հավերժության նշաններ՝ շեշտելով իրենց խորհրդաբանական կարևոր դերը: Անոթների ձևերը և գրականությունում պահպանված վկայությունները թույլ են տալիս ասելու, որ դրանք պատրաստվում էին կավից և մետաղից: Դրանք առարկայական ձևով ցույց են տալիս ժողովրդի կենցաղում տվյալ դարաշրջանում գործածական իրերն ու առարկաները:

Նորատուսի գերեզմանատունը լինելով Հայաստանի տարածքում իր չափերով ամենամեծը՝ իր մեջ ներառում է տապանաքարային պատկերաքանդակի գրեթե բոլոր տարածված թեմաները, որոնք կարող ենք հանդիպել ցանկացած տարածաշրջանում: Այստեղ ամենից տարածված թեմատիկան երկրագործությունը, խնջույքի և որսի տեսարանները ընդգրկող քանդակներն են: Այս շարքը համալրում է արհեստագործությանը նվիրված կամ հարսանեկան, ուսումնասերի թեմատիկայով պատկերաքանդակները: Հանդիպում ենք դեպքերի, երբ տապանաքարերում դժվար է պատկերաքանդակը վերագրել միայն մեկ թեմատիկայի, շատ դեպքերում դրանք հանդես են գալիս համատեղ, սինթետիկ ձևով: Քիչ թվաքանակ չեն կազմում նաև այն տապանաքարերը, որտեղ պատկերված է միայն հանգուցյալը առանց որևէ այլ տարրի, կամ էլ տեսարանը լրացված է խաչերի պատկերումով:

Հետաքրքիր է, որ վարպետները, լինելով հմուտ խաչքարագործներ, ստեղծելով հիասքանչ խաչքարեր, որոնք առանձնանում են իրենց մանրաքանդակ ոճով, նրբահյուս զարդանախշերով, նույն վարպետությամբ չեն աշխատել տապանաքարերի դեպքում: Շատ հաճախ նույն տապանաքարի վրա խաչային հորինվածքներն ավելի մեծ հմտությամբ են կատարված, քան պատկերաքանդակները: Թվում է, թե այս մեծ վարպետները թերացել են մարդկային կերպարներ ստեղծելիս, կարծես մեծ մասը թույլ ենթավարպետի ձեռքի աշխատանքներ լինեն: Այս ամենը բացատրվում է նրանով, որ սրբապատկերների դեպքում դարերի ընթացքում ինչպես ըմբռնման, նույնպես և կատարման կանոնական սկզբունքներ էին մշակվել, իսկ կենցաղային տեսարանները

նորություն էին և ամենից ավելի XVI դարում կիրառվող, հետևաբար թույլ զարգացած և վարպետներն այդ բնագավառում առանձին առավելության չեն հասել: Ինչ խոսք, քանդակների ճոխությունը, պատկերների առատությունը մեծ մասամբ կախված էր նաև վճարված գնի չափերից, քարի վրա աշխատելու հմտությունից և փորձառությունից: Ժամանակը նույնպես իր անխնա հետքն է թողել պատկերաքանդակների վրա՝ դրանք ընթացքում պատելով մամուռով կամ հողմահարելով: Ուսումնասիրելով պատկերաքանդակները, խաչային հորինվածքների ոճական ընդհանրությունները, տպավորություն է ստեղծվում, որ այստեղ աշխատել են ընդամենը երկու-երեք վարպետ՝ իրենց աշակերտների հետ միասին: Խաչքարային արձանագրությունները մեզ շատ կարևոր տեղեկություններ են տալիս այստեղ աշխատած վարպետների մասին: Հայտնի են նրանցից Քիրամը, Ավանեսը, Հովհաննեսը, Բաբը, Ներսեսը, Մկրտիչը, Մելիքսեթը:

Ջուղայեցիների տապանաքարեր: Դիվան հայ վիմագրության 4-րդ պրակում տեղ գտած արձանագրությունների և մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ Նորատուսում բնակություն են հաստատել նաև ջուղայեցիները: Ջուղայեցիների ընտանիքին պատկանող երկու տապանաքար քննության առնենք: Գերեզմանոցի հյուսիս-արևելյան կողմում մի տապանաքար գտնվում է, պատկերաքանդակի ներքևի հատվածը ամբողջությամբ հողի մեջ էր թաղված, մաքրելով այդ հատվածը՝ հետաքրքիր պատկերներ բացվեցին և ամբողջացավ տեսարանը: Հարավային երեսին պատկերված է մի հեծյալ ձիավոր, ով հրացանով կրակել է այծյամին: Վարպետը շատ լավ է ներկայացրել արդեն վիրավոր կենդանուն՝ առջևի և հետին ոտքերը ծավված դիրքում, կարծես ցավից կծկված: Ամենայն մանրամասնությամբ է տրված ձիավորի հանդերձանքն ու զենքերը: Այս ֆիգուրը կրում է երկծայր մի գլխարկ, արտահայտիչ դիմագծերով, երկու ձեռքով բռնել է հրացանը (մի փոքր անբնական դիրքով), գոտկատեղից կախված է դաշույնը, իսկ ձիու թամբից կախ է ընկած արդեն իսկ որսի զոհ դարձած մի կենդանի: Այնուհետև պատկերված է ձիու սանձից բռնած մի ֆիգուր, որը մյուս ձեռքում պահել է նժար՝ ծալապատիկ դիրքով նստած: Կշեռքով ֆիգուրից աջ պատկերված են պատկերաքանդակների անբաժան մասը կազմող սափորը և գավաթը, այնուհետև բեռներով լծված գրաստի պատկերն է, որի սանձից բռնել է ևս մի ֆիգուր, որն իր մարմնով դարձել է հյուսվածքազարդով շրջանակի մի մաս: Գրաստի և նժարը ձեռքին կերպարի պատկերները նմանություններ ունեն Մբ Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի մոտ գտնվող մի տապանաքարի հետ: Ելնելով ոճական առանձնահատկություններից՝ հավանական է, որ միևնույն վարպետն է աշխատել այս երկու տապանաքարերի դեպքում, թեև վարպետի անունը չի պահպանվել: Բոլոր կերպարները ունեն արտահայտիչ դիմագծեր, ընդգծված նեղ աչքեր, մանրամասն մշակված հագուստներ, գլխարկներ: Տապանաքարի հյուսիսային երեսը ծածկված է չորս կամարակապ խորաններում առնված մեկական քանդակազարդ խաչերով: Ընդհանուր առմամբ այս տապանաքարը առանձնանում է մյուսներից թե՛ իր կատարողական մակարդակով, թե՛ ֆիգուրների համեմատաբար ճիշտ դասավորվածությամբ, թե՛ պահպանվածությամբ: (Նկ. 14)

Նժարը ձեռքին կերպարի առկայությունը պատկերաքանդակում, թերևս, ավելի հասկանալի է դառնում արձանագրության ընթերցումից հետո: Այն զբաղեցնում է տապանաքարի զոգավոր վերնամասը, արձանագրությունը հետևյալն է. ԵՍ ՃՈՂԷՅԻ ՏԻՐԱՏՈՒՐՍ ԿԱՆԿՆԵՅԻ Խ[Ա]Չ[Ս]

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

ԲԱՐԷՆՈՍՈՒԹԵԱՆ ՄԵԼՔՈՒՄ ՔԱՍՊԱՐԻՆ ՃՈՒԴՆԵՐԻ ԱՂԲԵՐՔ¹: Այսինքն արդեն իսկ պարզ է, որ հանգուցյալը ջուղայեցի է, իսկ ջուղայեցիները հայտնի առևտրականներ էին, ինչը վարպետը փորձել է շեշտել կշեռքի, նժարի տեսքով: Պետք է նշել, որ սա միակ տապանաքարը չէ, որ պատկանում է ջուղայեցու: Կարծես միևնույն Տիրատուրը ևս մեկ տապանաքար է կանգնեցրել Ներսեսի հոգու փրկության համար [Դիվան, պրակ 4, № 170]²: Ստացվում է, որ ջուղայեցի մի ընտանիքի պատկանող տապանաքարեր ունենք, որոնք անհասկանալի պատճառով միմյանց կողքին չեն գտնվում:

Ս. Բարխուդարյանը Դիվանում նշում է, որ Սբ Աստվածածին եկեղեցուց դեպի արևելք, Տոնոյանի տան դիմաց կան մի խումբ տապանաքարեր, որոնք ըստ երևույթին ջուղայեցիների ընտանիքի տոհմական գերեզմանոցն է, և դրանցից միայն մեկն է թվագրված՝ 1553թ.³: Եկեղեցու անմիջապես արևմտյան մուտքի մոտ տեսնում ենք բավականին մեծ չափերով տապանաքար, որը ոճական առանձնահատկություններով նմանում է Ջուղայեցի Տիրատուրի կանգնեցրած տապանաքարի արվեստին: Այս երկու տապանաքարերը կարծես միևնույն վարպետի ձեռքի աշխատանք է: (Նկ. 15, 16)

Բարի տոհմաբանություն: Մեր վերջին այցելության ժամանակ Նորատուսի մեծ գերեզմանատան հյուսիս-արևելյան կողմում մի փոքրիկ տապանաքակ բացահայտեցինք՝ չորս միանման տապանաքարերով: Այս չորս տապանաքարերն էլ նույն չափերի են, բոլորի հյուսիսային երեսին կա նույն ձև պատկերված սափոր և պնակ, իսկ հարավային կողմում երեքի դեպքում ներկայացված է հանգուցյալը եռաշուշան թագով, ձեռքերը կրծքին խաչած, երեքի դեպքում էլ պատկերը առնված է որպես շրջանակ հանդիսացող միանման զարդի մեջ, զարդը չի շրջանակում ամբողջ տապանաքարը, այլ միայն պատկերն է ընդգծում՝ ավելի շեշտված դարձնելով, մեկի դեպքում հանգուցյալի ոտքերը պատկերված չեն, մյուս երկուսի դեպքում ուղղված են դեպի հյուսիս: Չորսից երեքը ունեն արձանագրություն, 3-ը ճակատային կողմերում ունեն խաչ, մյուս կողմում սրածայր կամար: Ելնելով պատկերագրական, ոճական նմանություններից, նույն զարդի կիրառումից՝ այս չորս տապանաքարերն էլ կարելի է համարել մի վարպետի ձեռքի աշխատանք:(Նկ. 17) Ներկայացնենք տապանաքարերի արձանագրությունները⁴.

1. ԱՅՄԷ ՀԱՆԳԻՍՏ ՄԱՐՔԻՍԻ ՈՐԴԻ ԿԱՊՈՒԵԼԻՆՍ Թ ՌՃՀԴ (1725թ.)
2. ԱՅՄԷ ՀԱՆԳԻՍՏ ԲԱԲԻ ՈՐԴԻ ՄԱՐՔԱՐԻՆ Թ ՌՃՂԷ (1748թ.)
3. ԱՅՄԷ ՀԱՆԳԻՍՏ ՄԱՐՔԻՍԻ ՈՐԴԻ ՀԱԲԱԲԻՆ Թ ՌՃՂԷ (1748թ.)

¹ Արձանագրության ընթերցումը մեր դաշտային գրառումներից: Շնորհակալություն ենք հայտնում արվեստաբան Դավիթ Ղազարյանին արձանագրության ընթերցմանը օժանդակելու համար:

² Այս տապանաքարը մեզ գտնել դեռևս չի հաջողվել:


³ Նշենք, որ փորձեցինք գտնել այս տոհմական գերեզմանոցը, բայց այժմ եկեղեցուց արևելք գյուղի դպրոցն է, բնակելի տներ չկան, իսկ տեղացի բնակիչները մերձակա տներից Տոնոյան ազգանունով բնակչի չէին ճանաչում:

⁴ Ներկայացվում են առաջին անգամ մեր կողմից:

⁵ Հետաքրքիր անձնանուն է, որի ստուգաբանությունը բացակայում է Հր. Աճառյանի Անձնանունների բառարանում: Բ.գ.թ. Խաչիկ Հարությունյանի հետ զրույցում հետաքրքիր բացատրություն տրվեց այն կապելով Կարապետ անձնանվան գեղջկական արտահայտման հետ:

Բաբ անվանումը մեզ հայտնի է մի խաչքարից, որտեղ նշված է Կազմող Բաբս (1703թ.), այսինքն ստացվում է Բաբ անունով խաչքարագործ վարպետ ենք ունեցել, և միգուցե 3-րդ արձանագրության մեջ նշվող «Բաբը» նույն վարպետն է, և հետաքրքիր է, որ այս տապանաբակը գտնվում է հենց Բաբի կանգնեցրած խաչքարի անմիջապես ետևի մասում:

Եզրակացություններ: Այսպիսով՝ գիտական շրջանառության մեջ չգտնելով համապարփակ աշխատություն տապանաքարերի կամ Նորատուսի վերաբերյալ՝ մեր ուսումնասիրությունները կատարելիս հիմնականում հիմնվել ենք մեր կատարած դաշտային աշխատանքների վրա: Նորատուսից բացի լինելով Գեղարքունիքի մարզի շուրջ 10 գյուղերում, ձեռք բերելով հարուստ համեմատական նյութ՝ կարող ենք փաստել, որ այս տարածաշրջանում Նորատուսը առանձնանում է իր տապանաքարային և խաչքարային հարուստ արվեստով, բազմաժանր թեմաներով, պատկերաքանդակների առատությամբ, ժամանակագրական ընդգրկմամբ: Նորատուսի տապանաքարային պատկերաքանդակները անցյալի պատմական իրականության ճշմարտացի վերարտադրության շնորհիվ կարևոր և անփոխարինելի նյութ են ընձեռում ոչ միայն քանդակագործության արվեստի, այլև միջնադարյան Հայաստանի կյանքի ու կենցաղի ուսումնասիրման համար:



Նկ 1. (Դափունց կամ Սբ Գրիգոր վանք, X-XIII դար, Նորատուս, հեղինակային լուսանկար)

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը




Նկ. 2. (Մբ Աստվածածին եկեղեցի, IX դար, Նորատուս, հեղինակային լուսանկարներ)



Նկ. 3. Մբ Աստվածածին եկեղեցու բակը, Նորատուս, հեղինակային լուսանկարներ



Նկ. 4. Սահակ իշխանի տապանաքարը, X դար, Մբ Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի մոտ, Նորատուս, հեղինակային լուսանկար



Նկ. 5. Շողգյոլ մատուռ, X դար, Նորատուս, հեղինակային լուսանկար



Նկ. 6. Տապանաքար Շողգյոլ մատուռի արևմտյան մուտքի մոտ, 1606թ., չափսերը՝ 100x58 սմ, Նորատուս, հեղինակային լուսանկար

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը



Նկ. 7. Ականջօղերով տղամարդկանց տապանաքարերի մանրամասներ, Նորատուս



Նկ. 8. Դերձակի տապանաքար, Շողգյոլ մատուռի արևելյան կողմում, Էլիաս կազմող, 1613թ., Նորատուս, հեղինակային լուսանկար



Նկ. 9. Նորատուսի միջնադարյան գերեզմանատան մատուռները՝ 1211թ. և 1714 թ., հեղինակային լուսանկար



Նկ. 10. Հարթ տապանաքարերի օրինակներ Նորատուսից, հեղինակային լուսանկարներ



Նկ. 11. Տապանաքարերի հարդարման խաչային հորինվածքների օրինակներ Նորատուսից, հեղինակային լուսանկարներ



Նկ. 12. Տապանաքարերի թեմատիկ պատկերաքանդակների օրինակներ Նորատուսից, հեղինակային լուսանկարներ

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը



Նկ.13. Տապանաքարերի ճակատային հարթությունների հարդարման մանրամասներ Նորատուսից , հեղինակային լուսանկարներ



Նկ.14. Որսի տեսարան, Նորատուսի միջնադարյան գերեզմանատուն, Ջուղայեցի Տիրատուրի կանգնեցրած տապանաքարը, XVI դար? , Հեղինակային լուսանկար



Նկ. 15, 16. Սուրբ Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի մոտ, Ջուղայեցու տապանաքար, հեղինակային լուսանկար



*Նորատուսի միջնադարյան գերեզմանոցը,
տապանաքակ*

Նկ. 17. Տոհմաքակ, Նորատուսի միջնադարյան գերեզմանատուն, XVIII դար, հեղինակային լուսանկարներ

Գրականության ցանկ

Ալիշան Ղ., 1893, Սիսական, Վենետիկ, «Ի Միսիթարա վանս, ի Ս. Ղազար», էջ 45:

Բարխուդարյան Ս., 1973, Դիվան հայ վիմագրության, Պրակ 4, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», էջ 18:

Բարխուդարյան Ս., Կարախանյան Գ., 1959, *Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները*, Պատմա-բանասիրական հանդես, №4, էջ 195-210:

Դրասխանակերտցի Հ., 1996, Պատմություն Հայոց, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», էջ 302:

Լալայան Ե., Ա.Թ., Գեղարքունիք կամ Նոր Բայազետի գավառ, Թիֆլիս, էջ 12:

Կարազյոզյան Հ., 1998, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ.1, «Մագաղաթ» հրատ., Երևան, էջ 12:

Կարախանյան Գ., 1975, *Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները (XV-XVI դդ.)*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 8, էջ 31- 47:

Հացունի Վ., 1923, Պատմություն հայ հին տարազին, Վենետիկ, էջ 224:

Մարտիրոսյան Ա., 1988, *Մի նորահայտ տապանաքար*, Պատմա-բանասիրական հանդես, № 2, էջ 154-159:

Մանուկյան Գ., 2000, Նորատուս, «Հայաստանի Հանրապետության բնակավայրերը» մատենաշար, «Զանգակ-97» Երևան, էջ 35:

Մարտիրոսյան Հր., 2014, Համեմատական լեզվաբանության և պատմագիտության խաչմերուկներում, Խմբ. Փիլիպոսյան Ա., Բազեյան Կ., Ֆազան Գ., Բ.Բ.Պիատրովսկին և հնագիտությունը (գիտական հոդվածների ժողովածու նվկիրված անվանի արևելագետ և ուրարտագետ Բորիս Պիատրովսկու հիշատակին), «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Երևան, էջ 241:

Նորատուսի գերեզմանատան միջնադարյան տապանաքարերի գեղարվեստական արժեքը

Միրիջանյան Դ., Աղայան Ս., 2020, Հայաստանի X-XIII դարերի տապանաքարերի տիպաբանությունը և առանձնահատկությունները, Հայագիտության հանդես, № 1 (19), Երևան, էջ 92:

Շահխաթունյան Հ., 2014, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, էջ 366:

Պետրոսյան Հ., 2014, Հայաստանի ուշմիջնադարյան տապանաքարային պատկերաքանդակի պատճառաբանական, պատկերագրական և իմաստաբանական քննության փորձ, Բանբեր Մատենադարանի № 21, Երևան, էջ 301-308:

Ջալալյանց Ս., 2016, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մաս Ա, Բ, «Դավլ» հրատ. Երևան, էջ 326:

Սաղումյան Ս., 1988, *Նկատառումներ տապանաքարային արվեստի մասին*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 5, էջ 50-61:

Սարգսյան Գ., 1963, *Խոսում են տապանաքարերը*, Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, էջ 29-40:

Միմեոն Երևանցի, 1873, Ջամբո, Վաղարշապատ, էջ 284:

Սմբատյանց Ս., Տեղագիր Գեղարքունի, Ծովագարդ Գավառի որ այժմ Նոր- Բայազիտ գավառ, 1862-1895 թթ., «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., Վաղարշապատ, էջ 480-488: